ԴԵՎԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՈԼՈՐԸ - ԲՈԼՈՐԸ


Ես թոշակառու կին եմ: Ի՞նչ եմ արել, որ բռնել ես:
Հարգելի՛ս, մի որպե: Ալո, Շեֆ...
Շեֆն անհասանելի է
Դև ջան, ապե, գիտե՞ս ես ով եմ: Թաղի Ռաֆոն եմ, լսած կլնես:
Կներեք Դև, բայց Դուք մեզ բռնելու իրավունք ունե՞ք:
Իրավո՞ւնք... Ի՞նչ իրավունք մի երկրում, որտեղ ընտրություններ են կեղծվում: Ինչքան կուզեմ, կուտեմ:
Ճի՛շտ ա: Այ, էս կեղծարարներին կե՛ր: Ոստիկանին էլ, որ դիտորդներին ոչ մի հարցում չի օգնել:

Մի որպե, միտինգ մի արեք: Քաղաքացի՛, ո՞վ չի օգնել... Բայց ի՞նչ էր էղել, որ օգնեի:
Ես եմ տեսել, բայց տեսախցիկս նստած էր, չկարողացա նկարել:


Չես հիշո՞ւմ ձայների հաշվարկի ժամանակ...

է՛, ավել մարտկոց ունենայիր, նկարեիր, փաստերով գայիր, թե չէ անկապ շուխուռ եք անում:
Իսկ որ փաստերով եկա, ի՞նչ արեցիք. գործը կարճեցիք՝ գնաց: Ամեն ինչ նկարել էի...

Ես ստեղի պատգամավորն եմ։ Ստեղից պիտի գնաս։ Իմ տղերքը կգան, դու չպիտի խանգարես։
Գինդ ասա՛։ Նույն խոզն եք, էլի։
Ոչ մի տեղ չեմ գնալու։
Ինձ լավ չես ճանաչում, ասեցի՝ չեմ գնալու։

Տեսա՞ր՝ հանձնաժողովը նստած կոֆե էր խմում։ Ուրեմն ինքն էլ պատասխանատու ա։ Գնա՛, տե՛ս՝ գրանցամատյանում ոչ մի խախտում չկա։
Քեզ թվում ա՝ իմ կամքո՞վ եմ հանձնաժողով մտել, աշխատանքս կկորցնեի։ Տունս ո՞վ էր պահելու։
Ոչինչ, կհանդիպենք դատարանում։ Տեղում զանգել եմ վերադաս հանձնաժողովի նախագահին ու մարդու իրավունքների պաշտպանին... Դեռ կստիպեմ ձեզ աշխատել։

Էս ոստիկանին պահեմ ընթրիքին. գինով կուտվի։ Հիմա տեսնենք նախաճաշի թեկնածուին։
Թող կարգին ընդդիմություն լիներ, ձայները պահեր։ Ոչ մեկ իրա գործը չանի, Դևն ի՞նձ ուտի։
Ինձ մի նայեք։ Ես մենակ ի՞նչ անեմ։ Հերս՝ հիվանդանոցում, փողը ո՞վ էր տալու։ Համ էլ Ռաֆոն ինձ ասեց, որ սենց պտի լինի ու վերջ։


Ռաֆոն ձեզ անձա՞մբ է սպառնացել: Ո՞վ է ձեզ ստիպել հանձնաժողով մտնել:
Հը՛մ, տեսնես Ռաֆոն նախաճաշի՞ն ա հարմար, թե՞ ճաշին:
Մի՛ նկարիր: Կոռեկտ չի:
Կոռեկտն ի՞նչ կապ ունի: Նկարելն իմ իրավունքն ա:

Դու ի՞նչ ես նկարում: Եթե ֆեյսբուք գցես, ստեղից սաղ դուրս չես գա:
Հա լա՛-ա՛վ, ի՞նչ ես գործ տալիս: Դու չէի՞ր, որ քվեաթերթիկի տեղը քյաբաբներն էիր հաշվում:
Livestream եմ անում, սաղ ինտերնետը դեմքիդ ա նայում, չփորձես տեսախցիկիս կպնել:

Դև ջան, հարազատ, ինձ թող էլի՛, հորս արև... Հազիվ գրին քարտ եմ շահել, գնամ Լոս:
Ի՛նչ անհամ տղա դուրս էկար:
Տես է՛. ինքը կեղծի, գնա Ամերիկա, մենք իր սարքած կեղտի մեջ ապրենք:

Խի՞ ա իմ սարքածը: Մարդիկ իրանց կամքով էկել քվեարկել են: Տատի ջան, դու չե՞ս քվեարկել:
Հա, Ռաֆո՛ ջան, ոնց որ ասել էիր: Թոռներիս համար էլ գոնե էդ օրը մի քիչ միս առա: Շա՛տ շնորհակալ եմ:
Տատի՞, ընտրակաշառք ես վերցրե՞լ: Էդ մի օրվա առածդ միսը հինգ տարի թոռներիդ ջանից են հանելու:

Բալա ջան, ես չվեցնեմ, էն մեկը կվերցնի: Համ էլ ով էլ անցնի, մի հաշիվ ա:
Մի հաշիվ չի, տատի: Կյանքդ օր օրի վատացել ա: Նորմալ ընտրություն լիներ, թոշակդ մսին կհերիքեր:
Հա՞, բայց Ռաֆոն ասեց մեկ ա, վաղը կզարթնես, բան փոխված չի լինի, գոնե էս մի քանի հազարը նաղդ ա:
Նաղդ ա, բայց կաշառք ա: Պատկերացնո՞ւմ ես՝ իշխանություն ստացավ ինչքա՞ն ավել հանցանք կգործի:
Տատի ջան, որ ձայնդ հանցագործին տաս, էլ ո՞նց փոխվի: Բա մենք էսքան պայքարում ենք որ սիստեմը փոխվի:

Լավ, տատիին վրա մի տվեք:

Դև ջան, հարազատ, տատիին տուն ճամփի, մեր ընգերոջ տատին ա:

Տենց հոգատարն ես, կեղծիք չաներիր:

Մտածե՞լ ես՝ էդ օգնությունը քանի ուրիշ մարդու հաշվին ա արվում:

Ե՞ս, ապեր... Ես էլ եմ իրանց դեմ: Ես պռոստը մեր մեծ ախպորն եմ օգնել: Կարգին մարդ ա, ինչ հարցով մոտեցել են, սաղին օգնել ա:

Բայց քեզ էլ կարելի ա ուտել, իբր դու ի՞նչ ես արել:

Որտեղ երկուսով էինք, թաղի խուժանը էլ բան չկարացավ անի: Իսկ թե մենակ եմ էղել, ի՞նչ կարայի, որ չեմ արել:

Ապե, բան էի՞ր ասում, դուրս արի խոսանք:

Ապեր, հետդ խոսալու չունեմ: Էս երկիր ա, ոչ թե բազառի բիսեդկա:

Հետը դուրս չգաս, էդ իրանց վախացնելու ձևերն են: Սկզբում ջիգյարով են փորձում լեզու գտնեն, հետո սկսում գողականով ճնշել:

Քեզ ո՞վ հարցրեց, այ *****: Դու ընտանիք չունե՞ս, տնեցիք խաբա՞ր են, դու ինչ գործի ես:

Էս ո՞նց ես խոսում: Հիմա նկարում եմ, դե նորից կրկնիր:

Էսսս ու՞ր եմ ընկել:



Բոլոր համընկնումները պատահական չեն:

Հեղինակ՝ Սոցիոսկոպ ՀԿ
www.socioscope.am
info@socioscope.am
facebook.com/socioscope.ngo